

սարիոյ Արքեպիսկոպոս ձեռնադրուելու: Ինչպէս ինք քահանայ ձեռնադրուելն առթիւ տուած մէկ կոնդակին մէջ (10 Մարտ 1738, Գիւ. Անտ.) կ'ըսէ, Կեսարիոյ Կապպադովկացոց Արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ Եւջմիածին 1706ին Աղեքսանդր Կաթողիկոսէն (ուրեմն ուղղելի Աղեքսանդր Ջուղայեցոյ Կաթողիկոսութիւնը՝ սկսեալ 1706—1714 Նոյ. 12): Ազգերեան, էջ 55, 84 սխալմամբ կը դնէ ձեռնադրեալ Աստուածատուր Կաթողիկոսէ: Եւ ինչպէս ինքը յիշեալ կոնդակին մէջ կ'ըսէ, Եպիսկոպոսութեանը 15դ տարին Հռոմ գացած է: Ուստի 1706—1720 Առաջնորդ եղած է Կեսարիոյ (ըստ այսմ ուղղելի է Տրդատ Եպիսկոպոսի ցանկը «Բիւզ.» 3073, ուր չեն յիշուիր Թէ Վրթանէս եւ Թէ Կարապետ Եպիսկոպոս Կեսարիոյ «Հայ, Վննետ.» 343) որ 1743ին ի Վննետիկ էր:

Երբ 1714 Նոյ. 12ին Աղեքսանդր Կաթողիկոս Ջուղայեցի կը վախճանի, կ'երեւայ Թէ Վրթանէս Արքեպ. անոր յաջորդին ընտրութեան համար Եւջմիածին գացած է: Վասն զի յաջորդն Աստուածատուր Համատանցի 7 Մայիս 1715ին Կաթողիկոս ընտրուելէն ետեւ († 10 Հոկտեմբեր 1725)՝ մեր Վրթանէս Արքեպ. ը Կ. Պոլիս Նուիրակ ղրկած է: Այս մասին ձեռքս կան վեց կոնդակներ (Գիւ. Անտ.) 1. Անթուական կոնդակ Աստուածատուր Կաթողիկոսի՝ ուղղեալ ի Կ. Պոլիս Նուիրակ գացող եւ մեռն տանող «Տէր Վրդանէս Աստուածաբան վարդապետին,